**Նոտարական ակտի կոդ:** 557-20250303-117-8802890
**Նոտարական ակտի գաղտնագիր:** CY1HGD

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ
«ԵՐԵՎԱՆ» ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ
ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՔՍԱՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ ԵՐԵՔԻՆ

**«ԱՐԱԲՈ ԽՈՒՄԲ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը**, հասցե՝ Հայաստան, ԵՐԵՎԱՆ, ՇԵՆԳԱՎԻԹ, ՄԱՆԹԱՇՅԱՆ 1 ՆՐԲ., Տ 46, գրանցման համար՝ 269.110.00012, ՀՎՀՀ՝ 02224409, ի դեմս տնօրեն՝ **ԱՇՈՏ ՄԱՄԻԿՈՆԻ ՄԻՐԶՈՅԱՆԻ**, ծնված՝ 24/08/1976, ՀԾՀ՝ 3408760438, անձնագիր՝ AT0525817, տրված՝ 004-ի կողմից 20/07/2020թ-ին, հաշվարված՝ ՀԱՅԱՍՏԱՆ, ԵՐԵՎԱՆ, ԱՐԱԲԿԻՐ, ԿՈՄԻՏԱՍԻ Պ., Շ 36Ա, Բն. 20 հասցեում, այսուհետ «ԿՈՂՄ-1» մի կողմից,
ԵՎ
**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» Պետական մարմինը,** հասցե՝ Հայաստան, ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Փ., 130, գրանցման համար՝ 286.184.1289951, ՀՎՀՀ՝ 02882913, ի դեմս գործադիր մարմնի ղեկավարի՝ **ԱՐԱ ԽՈՐԵՆԻ ՖԻԴԱՆՅԱՆԻ**, ում անունից ըստ լիազորագիր N27/88, տրված՝ 31.01.2024թ.-ին, **հանդես է գալիս լիազորված անձ՝ ԻՍՐԱՅԵԼ ՄՀԵՐԻ ՍԱՖԱՐՅԱՆԸ,** ծնված՝ 27/07/1987թ-ին, ՀԾՀ՝ 3707870642, նույնականացման քարտ՝ 005833934, տրված՝ 011-ի կողմից, 28/04/2017թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՐԲ., 8Ա Տ հասցեում, այսուհետ՝ «ԿՈՂՄ-2» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին
1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ
1.1. **Կողմերը փոխհամաձայնությամբ որոշեցին լուծել 09.09.2020թ.-ին /երկու հազար քսան թվականի սեպտեմբերի իննին/ միմյանց միջև նախկինում կնքված՝ Երևան, Կենտրոն Էջմիածնի հին խճուղի 105/6 /հարյուր հինգ կոտորակ վեց/ հասցեում գտնվող անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը, վավերացված՝ 09.09.2020թ.-ին /երկու հազար քսան թվականի սեպտեմբերի իննին/ «Երևան» նոտարական տարածքի նոտար՝ Լինա Գագիկի Հովսեփյանի կողմից, գրանցմամատյան՝ 731:**
**1.2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի համաձայն սույն համաձայնագրով սահմանված դրույթները գործում են 01.02.2025թ.-ից /երկու հազար քսանհինգ թվականի փետրվարի մեկից/:**
2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ
2.1. Սույն համաձայնագրի ստորագրման և օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալու պահից դադարում են վերը հիշատակված պայմանագրով կողմերի ստանձնած պարտավորությունները **/կողմերը միմյանց նկատմամբ որևէ պարտք ու պահանջ չունեն/:**
3.ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ
3.1. Սույն համաձայնագրով կողմերի չնախատեսված այլ պարտավորությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
3.2. Համաձայնագրի հետ կապված ծախսերը կատարվում են ԿՈՂՄ-2- ի կողմից:
3.3. Սույն համաձայնագիրը կողմերի ցանկությամբ կնքված է հայերեն լեզվով, 4/չորս/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Բնօրինակ է համարվում նոտարի մոտ պահվող օրինակը:
3.4. Սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանումնում 30 (երեսուն) աշխատանքային օր ժամկետում:
3.5. Համաձայնագրի բովանդակությունը նոտարի կողմից բարձրաձայն ընթերցվեց կողմերին: Համաձայնագրի բովանդակությունը բավարարում է նրանց պահանջները:
3.6 Մենք «Կողմերս» լիովին հասկանում և ընդունում ենք կնքվող համաձայնագրի իմաստն ու նշանակությունը, իսկ դրանից բխող և մեզ առնչվող իրավական, գույքային և այլ հետևանքները մեզ ծեռնտու են: Համաձայնագրի բոլոր դրույթները բխում են մեր «Կողմերիս» իրական մտադրություններից և այն ստորագրում ենք մեր կամքի ազատ արտահայտմամբ:

«ԿՈՂՄ-1» ----------------------------------------

«ԿՈՂՄ-2» ----------------------------------------

ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՔՍԱՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ ԵՐԵՔԻՆ
Սույն պայմանագիրը վավերացվել է, իմ՝ «Երևան» նոտարական տարածքի նոտար՝ ԼԻՆԱ ԳԱԳԻԿԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՍ կողմից:
Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, իրավունակությունը, գործունակությունը, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ՝ **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» Պետական մարմնի** վարձակալության իրավունքը ստուգված է:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 301 հոդվածի համապատասխան, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի տարածքային ստորաբաժանումում՝ 30/երեսուն/ աշխատանքային օր ժամկետում:

Գրանցված է գրանցամատյանում՝------ 493 ------ ով

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասը հազար ՀՀ դրամ, որը չի ներառում ավելացված արժեքի հարկը՝ 20% ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Լինա Գագիկի Հովսեփյան